

նմա, եւ նոյն ուղեկցեալ¹ առաջնորդեաց նմա յուսով: 36 «Մեծարոյ, ասէր, եւ հաւատարիմ առաջի Դենշապիոյ համբարակապետի երեւեցոյց զիս, մինչ զի աղաչելով զիս եւ բռնի տանելով անաւրիսին ի ձեռն հզաւրին Աստուծոյ ի տեղի տենչալի² նահատակութեան սրբոցն, որում կամաց հնարաւոր է ամենայն. որ եղէ արժանի տեսանել զամենայն, զոր ոչ կարծէի տեսանել, եւ լսել³ մի ըստ միոյ՞, որում ոչ արժանի լսելոյ համարէի զանձն իմ. զհարցումն բռնաւորացն եւ զպատասխանիսն միոյ միոյ սրբոցն, զաղաւթս եւ զկատարումն զիրաքանչիւր անձին տեսի կարգաւ եւ լուայ. ահա արդ եւ մեծի մասին, ձերոյ անձանձրոյթ խնդրելով՝ զիս անարժանս արժանի արար շնորհ սուրբ Երրորդութեանն, մինչեւ երկնաւոր գանձու նշխարացն սրբոցն գտայ լինել ձեզ բերող: 37 Փախոյց ամաւթով զպահապանսն տազնապեալս, զարհուրեցոյց զանհաւատ զվերակացուացն զսիրտս, ցրուեաց զանմիտ թագաւորին զխորհուրդս եւ բարձրացոյց զանուն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ»: 38 Չայսպիսի բանս պարծանաց եւ խնդութեան պատմէր անձանձրոյթ երանելի վաճառականն՝ ամենայն հաւատացելոցն ի Զրիստոս. որ էր երբեմն վաճառական երկրաւոր գանձուն՝ եւ եղեւ յանկարծ վաճառական բարի գործովք պատուական մեծի երկնաւոր գանձուն մարտիրոսական նշխարաց:

39 Նոյն խաւսք եւ մխիթարութիւն էր յաւետ կապելոց նախարարացն Հայոց յելս եւ ի մուտս իւրեանց, ի նստել ի տան եւ յառնել, ի տաւնս եւ յամսագլուխս. զոր եւ պատմեալ անյագ⁴ ցնծութեամբ՝ զուարճացուցանէին նորոգելով զամենայն մեղկեալ միտս լտղացն եւ հաստատէին ի հաւատս արդարութեան: 40 եւ մանաւանդ տէրն Արշարունեաց Կամսարականն Արշաւիր, որ յամենայն ժամու ի տուէ եւ ի գիշերի՝ վարդապետութիւն սրբոցն, եւ մանաւանդ խաւսք եւ հոգեւոր խրատ սրբոյն Ղեւոնդի, եւ պատասխանիք իւրաքանչիւր ուրուք ըստ հարցմանն սպանողացն, եւ աղաւթք միոյ միոյ ի ժամ կատարմանն եղեալք՝ այն էր նորա հոգւոյն կերակուր եւ որոճումն քաղցր, զոր ասէր⁵ եւ ընդ գութողայս սաղմոսին միաբանեալ՝ պատմէր անձանձրոյթ հանապազ: 41 Չոր եւ մեր յոլովագոյն լուեալ ի հրաշալի Կամսարականէն՝ գրեցաք յաւժարապէս հոգալով. զոր թեպէտ ըստ տկարամտութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել զբովանդակն⁶ ի կարգի, այլ եւ ոչ բնաւ գտեալ անյուշք՝ յապաղեալ մոռացաք ինչ ծուլանալով:

1 Ատ. ուղեկցեալ

2 Բտ. տենչալի

3 ՁՏՏ. լսել եւ տեսանել

4 Ձ. պատմել անյագ

5 Ձ. զոր առ սէր

6 Ձ. զբաւանդակն